ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՕՋԱԽՆԵՐ ՕՇԱԿԱՆԻՑ

1971 թ. սկսած ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Օշականի արշավախումբը պեղումներ է կատարում գյուղի կենտրոնում գտնվող մեծ և փոքր բլուրների վրա, որտեղ այլ հուշարձանների հետ միասին, փոքր բլուրի յանչին, պեղվում են մ. թ. ա. VII դ. պալատական համալիրների մնացորդներ։ Ներկայումս ավարտվել են առաջին համալիրի պեղումները, և մասնակիորեն պեղվել է երկրորդը։ Երկու համալիրները միանում են ընդարձակ բակով։ Նշված հուշարձաններից հայտնաբերված մեծաքանակ հնագիտական նյութը ցույց է տալիս, որ պալատները կառուցվել են մ. թ. ա. VII դ. և գոյատևել են մինչև մ. թ. ա. V դ։ Հետագայում, պալատական շենքերի ներսում և շրջակայքում այդ շինությունների պատերի քարերով կառուցվել են մ. թ. ա. III—մ. թ. III դդ. թվագրվող անտիկ դամբարաններ[1]։

Պեղումների ընթացքում պարզվել է, որ մ. թ. ա. V դ. հետո պալատական շինությունների մի մասը քանդվել է, որի մասին վկայում են պեղումների հետևանքով սենյակներում հայտնաբերված մոխրի և տանիքների ծածկերի վառված մնացորդները։ Հետագա շրջանում այդ սենյակները վերակառուցվել են՝ առանց հատակագծի փոփոխման։ Մի քանի սենյակներ՝ մասնավորապես սրբատեղիները, դրանից բացի, իրենց ներքին հարդարանքով ենթարկվել են արմատական վերափոխման։ № 20, 22, 25 և 27 սենյակներում սրբատեղիները վեր են ածվել մի։յանների՝ պաշտամունքային օջախներով։

Առանձնապես մեծ վերակառուցումների են ենթարկվել № 25 և 27 սենյակները, որոնք եղել են ընդարձակ սյունապարդ դահլիճներ՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 150 և 100 քառ. մ մակերեսով։ Այդ դահլիճների ծածկը հենվել է երկու շարքով դասավորված ուղղանկյուն սյուների վրա։ № 25 կացարանում, վերակառուցման ժամանակ, անց է կացվել շեղակի անցնող միջնապատ, որը, ի տարբերություն հին պատերի, կառուցված է կոպիտ, անտաշ, մանր քարերից, որոնց հետ երբեմն օգտագործվել են խոշոր գետաքարեր, մի հանդամանք, որը չի նկատվում մ. թ. ա. VII դ. պատերի շարվածքի մեջ։ Այդ միջնապատը նախկին դահլիճը բաժանում է երկու համարյա հավասար սենյակների։ Առաջին սենյակը պահպանել է իր նախկին՝ դեպի բակ տանող մուտքը։ Այս սենյակի հյուսիս-արևմտյան անկյունում՝ № 26 սենյակի պատին ուղղահայաց, իսկ բակի պատին զուգահեռ՝ կառուցվել է 3,5 մ երկարությամբ կոպիտ միջնապատ, որի հետևանքով այստեղ կազմվել է փոքրիկ խորշ։ Դրա հյուսիս-արևմտյան անկյունում տեղադրված է 1×0,5 մ չափերի մի օվալաձև օջախ, որի պատերն ունեն 25 սմ լայնություն և 15 սմ բարձրություն, որոնք 5 սմ խորությամբ թաղված էին հողի մեջ (նկ. 1)։ Հատակը սվաղված է 4—5 սմ հաստությամբ կավով։ Օջախի պատերը և հատակը ներսից օգտագործման հետևանքով թրծվել են։ Այսպիսով, վերակառուցման շնորհիվ նախկին դահլիճի հյուսիս-արևմտյան անկյունում առաջացել է 7 քառ. մ մակերեսով մի փոքրիկ սենյակ, որը երկնակի դռներ ունենալու հետևանքով (խորշի և դահլիճի) կազմում է յուրահատուկ մեհյան՝ նշված օջախով։

Նույն դահլիճի վերափոխումից ստեղծված երկրորդ սենյակում օջախը տեղադրված է հյուսիս-արևմտյան մասում և կցված է արտաքին պատին։ Այն ունի ուղղանկյուն ձև, 70×45 սմ չափեր և 10 սմ խորություն (նկ. 2)։ Արտաքին պատի մոտ տեղադրված է ուղղանկյուն կտրվածքով մի փոքրիկ սյուն, որից աջ ու ձախ անցնում են հատակի մեջ տեղադրված կավե պատերը։ Այդ սենյակի մուտքը բացվում է բակ տանող միջանցքի վրա։ Լրացուցիչ պատի բա-

---

[1] Степан Есаян, Арам Калантарян, Античный некрополь Ошакана (*ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 12, էջ 28—40*)։

ցակայության պատճառով այստեղ կրկնակի դռների սկզբունքը հնարավոր չի եղել կիրառել և, հավանաբար, երկրորդ դուռը տեղադրվել է նախկին միջանցքում։

Մեծ փոփոխություններ են կատարվել № 27 սենյակում։ Այստեղ հարավ-արևմտյան անկյունում ստեղծվել է տնտեսական նշանակությամբ փոքրիկ խորշ, որի պատը ծածկում է № 1 սյան խարիսխը։ Հյուսիսային պատի ուղղությամբ քարերից և հողից կառուցված 10×3, 6×0,5 մ չափերի հենահարթակը ծածկում է № 5—8 սյուների խարիսխները։ Այս հե-



նահարթակի արևմտյան մասում պատին կցվել է 20 սմ բարձրությամբ մի հարթակ, որից դեպի մեջտեղ է տանում 1 մ լայնությամբ տուֆե սալերից շարված ուղի2։

Այս սենյակի հարավ-արևմտյան մասում, ինչպես № 25 սենյակի առաջին կեսում, կառուցվել է նման խորշ, որի արևմտյան պատին կից բացվեց մի օջախ։ Այն կազմված է ուղղահայաց դրված 50—70 սմ բարձրությամբ չորս քարե սյուներից, որոնց միջև երեք կողմից տեղադրված են 50 սմ բարձրությամբ քարե սալեր։ Օջախի ներսի տարածությունը 98×70 սմ է (նկ. 3)։ Այսպիսով, օջախի երեք կողմերը ծածկվել էին, և բաց էր մնում միայն առջևի՝ արևելյան կողմը։ Օջախի հատակը սվաղված է 5 սմ հաստությամբ կավի շերտով, որը պատերի նման խիստ վառված է՝ օգտագործման հետևանքով։ Հատակին հայտնաբերվեց մեծ քանակությամբ մոխիր և փայտածուխ։ Ինչպես № 25 սենյակի առաջին կեսում, այստեղ ևս կառուցվել է մեհյան՝ կրկնակի դռների նույն սկզբունքով։

Նման սկզբունքով է կառուցված № 20 սենյակի մեհյանը։ Այստեղ կառուցվել է նույնատիպ պատ, իսկ ներսում՝ № 25 և 27 սենյակներում կառուցված է նման խորշ կազմող մի

2 С. А. Есаян, Раскопки колонного зала в Ошакане («Археологические открытия за 1979 г.», М., 1980, с. 424).

պատ։ Խորշի ներսում կառուցվել է № 27 դահլիճի օջախի տիպի օջախ, որի առջևի բաց պատն ուղղված է դեպի հյուսիս. օջախի չափերն են 82×75 սմ (Նկ. 4)։

Կրկնակի դռների այդպիսի սկզբունք է նկատվում նաև № 22 սենյակում, որի արևելյան անկյունում կառուցված էր 2,57×2,42×0,5 մ չափերի մի հարթակ, որի պատի մեջ հայտնաբերվեց № 25 սենյակի սյան խարիսխներից մեկը։ Այդ հանգամանքը վկայում է այն մասին, որ վերականգնումից հետո փոխվել է ոչ միայն սենյակների կիրառական նշանակությունը, այլև ծածկի ձևը։ Այդ հարթակի վրա պեղվել է երկու օջախ։ Դրանցից մեկը գտնվում է հարթակի հյուսիս-արևելյան անկյունում և ուղղանկյունաձև է։ Այն կառուցված է 7 հարթ տուֆ բարից և ունի 93×47 սմ չափեր (Նկ. 5)։ Նրա հատակը սվաղված է կավով, որն օգտագործումից այրվել է։ Օջախի կենտրոնում, նրա երկայնակի առանցքով, պահպանվել են ոչ բարձր պատի այրված մնացորդներ։ Ակնհայտ է, որ այս օջախը երկմասանի է և կարող էր, ամենայն հավանականությամբ, օգտագործվել տարբեր ծեսերի համար։ Երկրորդ օջախը գտնվում է նույն հարթակի հարավ-արևելյան անկյունում և նման է № 25 սենյակի օվալաձև օջախին՝ այն տարբերությամբ, որ այս օջախի մի կողմը բաց է։ Այն ամենափոքրն է և ունի 50×30 սմ չափեր և 8 սմ խորություն։ Հատակը մյուս օջախների նման սվաղված է կավով, որը օգտագործումից խիստ թրծվել է (Նկ. 6)։

Ինչպես ցույց են տալիս Օշականի պեղումները, մ. թ. ա. V դ. հետո հանդես է գալիս նոր՝ կրակի պաշտամունքը։ Այդ նոր պաշտամունքին նվիրված օջախները, հավանաբար, ունեցել են տարբեր պաշտամունքային նշանակություն և օգտագործվել են զանազան ծեսերի ժամանակ։ Պեղումներից երևում է, որ, չնայած Օշականի պալատական համալիրում կյանքն անընդմեջ շարունակվել է, բայց ոչնչացվել են մ. թ. ա. VII դ. ժամանակաշրջանի պաշտամունքի հուշարձանները՝ սյունակուռքերը, արձանները, ֆալուսները։ Դրանց մի մասն օգտագործվել է պատերի վերականգնման համար որպես շինանյութ, իսկ մյուսները՝ շարդված վիճակում հայտնաբերվել են տեղերում։

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ հին կրոնի փոխարեն առաջ էր եկել կրակի պաշտամունքը։ Այդ ամենը տեղի է ունեցել մ. թ. ա. VI—V դդ., երբ Հայաստանը գտնվում էր Աքեմենյան Իրանի տիրապետության ներքո և կրակի պաշտամունքը տիրապետող էր դարձել ու կառուցվել էին մի շարք մեհյաններ։ Դատելով կառուցվածքների առանձնահատկություններից, կարելի է ենթադրել, որ դրանք կրել են ոչ թե իրանական իշխողների պաշտոնական շինությունների, այլ տեղական բնակչության հուշարձանների բնույթ[3]։

ԼԵՈՆԻԴ ԲԻՅԱԳՈՎ, ՆՈՐԱ ՆԵՂԻԲԱՐՅԱՆ

---

[3] Նման վերափոխումներ հայտնի են նաև այլ հուշարձաններից (К. Л. Оганесян, Крепость Эребуни, Ереван, 1980, с. 104).